

Վիճակագրական արտադրանք – Վիճակագրական բիզնես ռեգիստր/ փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրություն/տարեկան

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
1. Կարիքների ձևակերպում		
	1.1 Կարիքների բացահայտում	<p>Վիճակագրական բիզնես ռեգիստրի (այսուհետ՝ ՎԲՌ) վարման անհրաժեշտությունը պայմանավորված է դրանում ներառված տեղեկատվության (վիճակագրական ցուցանիշների) նկատմամբ ինչպես ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) վիճակագրություն վարող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների շարունակաբար աճող պահանջով:</p> <p>ՎԲՌ-ի վարումը Արմստատի ներքին նպատակներով կիրառվում է գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Միավորներ) վերաբերյալ Արմստատի վիճակագրություն վարող հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ոլորտային շտեմարաններում առկա տեղեկատվության արդիականացման, համալրման, ամբողջականացման համար:</p> <p>ՎԲՌ-ի արդիականացված շտեմարանի տվյալների օգտագործումը ներքին նպատակներով ծառայում է նաև որպես տեղեկատվական հենք համատարած և ընտրանքային հաշվառումների իրականացման համար: ՎԲՌ-ի արդիականացված շտեմարանի տվյալների հիման վրա ընտրանքային կամ համատարած հաշվառումների իրականացման համար անհրաժեշտ միավորների շրջանակը նախապատրաստվում է այդ նպատակով Արմստատի վիճակագրություն վարող շահագրգիռ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան՝ կիրառելով համապատասխան գործիքակազմեր:</p> <p>ՎԲՌ-ի արդիականացված տվյալների շտեմարանի օգտագործումն արտաքին նպատակներով ծառայում է որպես տեղեկատվական հենք՝ վիճակագրական ամփոփ տեղեկատվության մշակման, ամփոփման ու տարածման աշխատանքների իրականացման համար, այդ</p>

		<p>թվում՝ փոքր ու միջին ձեռնարկատիրության վիճակագրության վարման, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված հարցաթերթերի լրացման, պետական մարմինների և այլ օգտագործողների կողմից հայցվող տեղեկատվության տրամադրման նպատակներով՝ պահպանելով դրանց գաղտնիությանն վերագրվող օրենսդրական պահանջները:</p> <p>ՎԲԴ-ում ներառված Միավորներին վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և ենթակա են օգտագործման բացառապես վիճակագրական նպատակներով՝ համաձայն օրենքով սահմանված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների:</p>
	<p>1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում</p>	<p>Տեղեկատվության նկատմամբ օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով վիճակագրական տարեկան ծրագրի նախագիծը հանրության կարծիքին է ներկայացվում Արմստատի պաշտոնական կայքի միջոցով և ընտրանքային կարգով ընտրված (ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված) շուրջ 147 հիմնական վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին (պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատաիրավական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջանակներ, հասարակական և միջազգային կազմակերպություններ և զանգվածային լրատվամիջոցներ): Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության» հարցաթերթի միջոցով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=131 հղումը): Բացի այդ, վիճակագրական ծրագրերի նախապատրաստմանը վերաբերող փաստաթղթերի ամբողջական փաթեթները ներկայացվում են նաև Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդին (տես՝ https://www.armstat.am/am/?nid=761 հղումը): Վերջինիս կողմից ներկայացված առաջարկությունների/դիտողությունների հիման վրա ձևավորվում են այդ ծրագրերի նախագծերի</p>

		<p>վերջնական տարբերակները, որից հետո միայն ներկայացվում ՀՀ վիճակագրության պետական խորհրդին (այսուհետ՝ ՎՊԽ)՝ հաստատման:</p>
	<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>	<p>Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են (այսուհետ՝ Ծրագրեր): Պաշտոնական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է հնգամյա ծրագիր, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ տարեկան ծրագիր: Ծրագրերը ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:</p> <p>Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի վիճակագրությանը» պայմանագրի «Բիզնես վիճակագրության կատարելագործում» բաղադրիչի շրջանակում Դանիայի վիճակագրական ծառայության բիզնես ռեգիստրի գծով փորձագետների կողմից 2011 թվականին տրամադրվել են համապատասխան խորհրդատվություններ՝ միտված Արմաստատի կողմից վարվող բիզնես ռեգիստրի վարման շարունակական կատարելագործմանը:</p> <p>Թվինինգ գործընկերություն Արմաստատի հետ՝ Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» պայմանագրի շրջանակում 2020թ.-ին տրամադրվել են առաջարկություններ՝ միտված Արմաստատի կողմից ՎԲՌ-ի կատարելագործմանը:</p>

		<p>Պարբերաբար իրականացվում է Արմաստատի կողմից ՎԲՌ-ի ռազմավարության սահմանում, որն իր մեջ ընդգրկում է ՎԲՌ-ի հնարավոր զարգացումներն առաջիկա 5 տարիների համար: Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների տեսանկյունից ՎԲՌ-ի զարգացմանն առնչվող բոլոր նախաձեռնությունների հիմքում ընկած են հետևյալ հայեցակարգերը՝</p> <ul style="list-style-type: none"> - ՎԲՌ-ի տեղեկատվական շտեմարանի ընդհանուր որակի բարելավում, - ՎԲՌ-ում ներառված Միավորների ընդգրկունության ամբողջականացում, - վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների (ռեսպոնդենտների) վիճակագրական ծանրաբեռնվածության նվազեցում, - ՀՀ-ում միասնական վարչական տեղեկատվական համակարգի ձևավորմանը միտված մեթոդաբանական աջակցում և վիճակագրական նպատակներով դրա օգտագործում:
	<p>1.4 Հասկացությունների որոշում</p>	<p>ՎԲՌ-ն Հայաստանի Հանրապետությունում գրանցված/հաշվառված և գործող Միավորների իրական գտնվելու վայրի, տնտեսական գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակի և 2.2-րդ կետով սահմանված այլ ցուցանիշների վերաբերյալ մշտապես արդիականացվող տվյալների շտեմարան է, որը վարվում է վիճակագրական, մասնավորապես՝ դիտարկումների ու հետազոտությունների անցկացման, դրանց ընտրանքի իրականացման, բիզնես դեմոգրաֆիայի վարման, ամփոփ տեղեկատվության մշակման ու տարածման նպատակներով:</p> <p>Գործող Միավորները՝ հաշվետու տարում տնտեսական գործունեության իրականացման արդյունքում առնվազն դրական շրջանառություն և/կամ վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակ ունեցող միավորներն են:</p>
	<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>ՎԲՌ-ի տեղեկատվական շտեմարանի ձևավորման աղբյուրները ուղղակի և անուղղակի աղբյուրներն են: Ուղղակի աղբյուրները ռեսպոնդենտների կողմից լրացվող և ներկայացվող փաստաթղթերն են (վիճակագրական հաշվետվություններ, տեղեկանքներ և այլն): Անուղղակի աղբյուրները՝ վարչական ռեգիստրներից և այլ աղբյուրներից ստացվող/հասանելի տեղեկություններն են:</p>

		<p>Ուղղակի և անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկություններն օգտագործվում են դրանց համադրման, տրամաբանական ու թվաբանական ստուգման, արժանահավատության գնահատման ու ճշգրտման արդյունքում: ՎԲՌ-ի վարման համար տեղեկատվական աղբյուրներ կարող են հանդիսանալ նաև հանրային բաց աղբյուրներում զետեղված արժանահավատ տեղեկությունները: ՎԲՌ-ի տվյալների շտեմարանը արդիականացվում է տարեկան պարբերականությամբ՝ հունվարի 1-ի դրությամբ:</p> <p>ՎԲՌ-ի տվյալների շտեմարանում պահվող տեղեկություններն արդիականացվում են ստորև նշված աղբյուրներից հավաքվող/ստացվող տեղեկատվության հիման վրա.</p> <ol style="list-style-type: none"> 1) ռեսպոնդենտների կողմից ՎԲՌ վերաբերյալ ներկայացված հաշվետվություններ. 2) ռեսպոնդենտների կողմից ներկայացված այլ վիճակագրական փաստաթղթեր. 3) Արմստատի կողմից իրականացվող նպատակային հետազոտությունների (այդ թվում՝ միանվագ) արդյունքում հավաքված տվյալներ. 4) Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրից հասանելի տվյալներ. 5) Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տվյալներ. 6) այլ վարչական աղբյուրներից ստացված տվյալներ. 7) հանրային բաց աղբյուրներում զետեղված արժանահավատ տվյալներ:
	<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	<p>ՎԲՌ-ի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում/ստացվում է ՎՊԽ-ի կողմից հաստատված վիճակագրական հաշվետվությունների միջոցով և Արմստատի ու վարչական ռեգիստր վարող մարմինների միջև նախապես հաստատված համաձայնագրերի, փոխըմբռնման հուշագրերի և այլ փաստաթղթերի հիման վրա: Մինչ վիճակագրական հաշվետվությունների ու դրանց լրացման հրահանգների հաստատումը ՎՊԽ կողմից և Արդարադատության նախարարության կողմից որպես նորմատիվ իրավական ակտ դրա պետական գրանցումը, իրականացվում է դրանցում ներառված ցուցանիշների ու դրանց վերաբերյալ լրացման հրահանգների մասով միջազգային փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև աշխատանքային</p>

		<p>քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ:</p> <p>Արմատատի ու վարչական ռեգիստր վարող մարմինների միջև հաստատված համաձայնագրերի, փոխըմբռնման հուշագրերի և այլ փաստաթղթերի մասով աշխատանքային քննարկումներ են իրականացվում այդ վարչական ռեգիստրների հետ, որոնց արդյունքում հստակեցվում են ներկայացման ենթակա ցուցանիշների կազմը, դրանց ներկայացման պարբերականությունը, մեթոդաբանությունը և այլն:</p>
<p>2. Նախագծում</p>		
	<p>2.1 Արդյունքների նախագծում</p>	<p>ՎԲՌ-ի տվյալները հավաքվում/ստացվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի, Ծրագրերի հիման վրա, ինչպես նաև ՎՊԽ 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն, 2021 թվականի մայիսի 5-ի «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վարման կարգը հաստատելու մասին» թիվ 13-Ա, 2018թ.-ի հոկտեմբերի 19-ի «Իրավաբանական անձանց բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի վերաբերյալ Ձև թիվ 1-ԲՌ(տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը ու դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 24-Ն որոշումների հիման վրա: Վարչական ռեգիստրներից համապատասխան տեղեկատվության ստացումը կարգավորվում է 2011 թ. հունիսի 13-ի Արդարադատության նախարարի N 85-Ն և Արմատատի նախագահի N 68-Ն , ինչպես նաև 2014 թ. սեպտեմբերի 4-ի Ֆինանսների նախարարի N124-Ա և 2014 թ. սեպտեմբերի 2-ի Արմատատի նախագահի N575-Ա համատեղ հրամաններով հաստատված դրույթներով:</p> <p>ՎԲՌ-ի արդյունքային ցուցանիշների նախագծումն իրականացվում է հրապարակման ենթակա վիճակագրական ամփոփ տեղեկատվության կառուցվածքին ու մեթոդաբանությանը համապատասխան (օրինակ, փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, տես՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2346 հղումը), իսկ տարբեր խմբավորումներով (օրինակ, ըստ տնտեսական գործունեության առանձին տեսակների կամ ՀՀ վարչատարածքային բաժանման) վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կամ միջազգային կազմակերպությունների հարցումների մասով՝ ըստ</p>

		<p>դրանցում ներկայացված ցուցանիշների կառուցվածքի և համապատասխան խմբավորումների:</p> <p>Արմատատում ներքին օգտագործման նպատակով ՎԲՌ-ի ելքային տվյալների նախագծումն իրականացվում է Արմատատի վիճակագրություն վարող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան:</p>
	<p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p>	<p>ՎԲՌ-ի տվյալների շտեմարանը ներառում է Միավորների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.</p> <ol style="list-style-type: none"> 1) նույնականացման ծածկագիրը (ՁԿԴ)՝ առկայության դեպքում. 2) հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ). 3) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման/հաշվառման համարը՝ առկայության դեպքում. 4) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման/հաշվառման ամսաթիվը՝ առկայության դեպքում. 5) լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն ազգանունը). 6) կազմակերպաիրավական ձևը. 7) հիմնադիրների/բաժնետերերի վերաբերյալ տեղեկությունները (պետություն, համայնք, քաղաքացի, իրավաբանական անձ, օտարերկրյա՝ պետություն, համայնք, քաղաքացի, իրավաբանական անձ). 8) գտնվելու (գրանցման/հաշվառման) վայրի հասցեն, հեռախոսահամարը, փոստային դասիչը, էլեկտրոնային փոստի հասցեն. 9) տնտեսական գործունեության իրականացման վայրի հասցեն, հեռախոսահամարը, փոստային դասիչը, էլեկտրոնային փոստի հասցեն. 10) տնտեսական գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակները. 11) ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից ստացված հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի). 12) ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակը. 13) առանձնացված ստորաբաժանումների, ներկայացուցչությունների (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում) առկայությունը: ՎԲՌ-ում

		<p>կիրառվում են հետևյալ վիճակագրական դասակարգիչները.</p> <ul style="list-style-type: none"> - Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրություն (տես՝ https://www.arlis.am/Annexes/5/2020_N1077hav.doc հղումը). - Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ (տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139115 հղումը). - Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչ (տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143434 հղումը). - Աշխարհի երկրների դասակարգիչ (տես՝ http://www.cisstat.com/class/razdel/kcm_cisstat.pdf հղումը):
	<p>2.3 Տվյալների հավաքման նախագծում</p>	<p>ՎԲՌ-ի տեղեկատվության հավաքումը/ստացումը ուղղակի և անուղղակի աղբյուրներից իրականացվում է տարեկան պարբերականությամբ՝ համաձայն 2.1 կետում նշված փաստաթղթերի:</p>
	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>ՎԲՌ-ի գլխավոր համակցությունը ներառում է հաշվետու տարում տնտեսական գործունեություն իրականացրած բոլոր Միավորներին: Այն ձևավորվում է Արմստատի կողմից ամենամյա պարբերականությամբ հավաքվող տնտեսության ոչ ֆինանսական բիզնես հատվածի իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվության, Արմստատի վիճակագրություն վարող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից Միավորների վերաբերյալ տիրապետվող տեղեկատվության, ինչպես նաև ՊԵտական եկամուտների կոմիտեի կողմից Արմստատին ներկայացվող տեղեկատվության համադրման, ճշգրտման ու ամբողջականացման արդյունքում:</p> <p>Ոլորտային վիճակագրական տվյալների շտեմարանների արդիականացման ու ամբողջականացման նպատակներով Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում նոր գրանցված/հաշվառված Միավորների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է տրամադրվում Արմստատի մարզային և Երևան քաղաքի վարչություններին: Բացի այդ, Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող և Արմստատի վիճակագրական</p>

		<p>հաշվառման մշտադիտարկման դաշտում չներառված Միավորների վերաբերյալ տեղեկատվությունը ամենամյա պարբերականությամբ տրամադրվում է Արմստատի վիճակագրություն վարող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին:</p> <p>Արմստատի վիճակագրություն վարող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների մշտադիտարկումների համար անհրաժեշտ ոլորտային ընտրանքային համակցությունները ձևավորվում են ՎԲԴ հիման վրա՝ վերջիններիս կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան:</p>
	<p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p>	<p>ՎԲԴ-ի վերաբերյալ ուղղակի և անուղղակի աղբյուրներից վիճակագրական տեղեկատվության հավաքումից/ստացումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական ու տրամաբանական ստուգումների: Բացի այդ, համադրվում են միևնույն Միավորին վերաբերող տարբեր աղբյուրներից ստացված/հավաքված վիճակագրական ցուցանիշները, ինչի հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան Միավորների հետ կապ հաստատելու միջոցով և տեղեկատվության արժանահավատության գնահատման արդյունքում, իրականացվում են ցուցանիշների համապատասխան ճշգրտումներ:</p>
	<p>2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում</p>	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց ամփոփումը իրականացվող բոլոր գործընթացներում իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ: Մասնավորապես, ռեսպոնդենտների մասով իրականացվում է համապատասխան իրազեկումներով ապահովում, հրահանգավորում, ըստ անհրաժեշտության մեթոդաբանական պարզաբանումների տրամադրում և այլն: ՎԲԴ-ի աշխատանքներում ներգրավված մասնագետների մասով պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական դասընթացների, ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրության ու փոխանակման միջոցով:</p> <p>Բացի այդ, պարբերաբար արդիականացվում և կատարելագործվում են տեղեկատվության մշակման գործիքակազմերը:</p>

<p>3. Կառուցում</p>	<p>3.1 Հավաքման գործիքի կառուցում</p>	<p>Տեղեկատվության հավաքման համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվական ձևի ու դրա լրացման հրահանգի հասանելիության ապահովման նպատակով առկա են թղթային և էլեկտրոնային միջոցներ: Բացի այդ Արմստատի կայքէջում առկա է ռեսպոնդենտների համար ստեղծված էլեկտրոնային հարթակ (տես՝ https://www.armstat.am/am/?nid=9 հղումը), որը միտված է ռեսպոնդենտների և Արմստատի միջև հարաբերությունների դյուրացմանը: Արմստատի կողմից վարչական աղբյուրներից ՎԲՌ-ի վերաբերյալ տեղեկատվության մասով առկա են էլեկտրոնային հասանելիության առցանց հարթակներ կամ նախապես մշակված ու վարչական ռեգիստրների հետ համաձայնեցված էլեկտրոնային գործիքակազմեր:</p>
	<p>3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: ՎԲՌ-ի տեղեկատվության մուտքագրման ծրագրում առկա է մուտքագրված տվյալների թվաքանակն ու տրամաբանական ստուգումների, նախորդ ժամանակաշրջանի տվյալների հետ համադրումների իրականացման ապահովման համար անհրաժեշտ գործիքներ:</p>
	<p>3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>ՎԲՌ-ի տեղեկատվության հիմնական օգտագործողները Արմստատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են: ՎԲՌ-ի տվյալների արդիականացված շտեմարանից անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է վերջիններիս կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան: ՎԲՌ-ի ամփոփ տեղեկատվության մշակումն ու տրամադրումն իրականացվում է միջազգային կազմակերպությունների և այլ օգտագործողների կողմից ներկայացված հարցադրումների ձևաչափին համապատասխան՝ պահպանելով օրենքով սահմանված վիճակագրական գաղտնիությանը վերագրվող դրույթները: ՎԲՌ-ի հիման վրա փոքր ու միջին ձեռնարկատիրության վիճակագրական ցուցանիշների կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում է միջազգային մեթոդաբանական առաջարկներով նախապես պատրաստված ձևաչափին:</p>

<p>3.4 Գործընթացների կարգավորում</p>	<p>ՎԲՌ-ի տվյալների արդիականացված շտեմարանի հիման վրա վիճակագրական արտադրանքի պատրաստումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝</p> <p>1) ուղղակի աղբյուրից տեղեկատվության հավաքում, թվաքանական ու տրամաքանական ստուգումների իրականացում և մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրում.</p> <p>2) անուղղակի աղբյուրներից տեղեկատվության ստացում և հարմարեցում վիճակագրական նպատակներին.</p> <p>3) ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվության համադրում, անճշտությունների բացահայտում, ճշգրտում.</p> <p>4) ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվության ամբողջականացում և ՎԲՌ-ի արդիականացված տվյալների շտեմարանի ձևավորում.</p> <p>5) ՎԲՌ արդիականացված տվյալների շտեմարանի օգտագործում.</p> <p>ա. ներքին օգտագործման նպատակով, բ. վիճակագրական ամփոփ տեղեկատվության նախապատրաստման ու հրապարակման նպատակով, գ. օգտագործողների կողմից հայցվող տարբեր խմբավորումներով տեղեկատվության մշակման ու տրամադրման նպատակով:</p>
<p>3.5 Արտադրության համակարգի փորձարկում</p>	<p>ՎԲՌ-ի հաշվետվական ձևերում կամ վարչական աղբյուրներից ստացվող տեղեկատվության կազմում փոփոխությունների ու լրացումների իրականացման պարագայում փորձարկվում են տեղեկատվության մշակման գործիքակազմերը (մուտքագրման ծրագիրը, տեղեկատվության համադրման ու ստուգաճշտման գործիքները և այլն)՝ հնարավոր բացթողումների և անճշտությունների հայտնաբերման ու ճշգրտման նպատակով:</p>
<p>3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում</p>	<p>ՎԲՌ-ի հաշվետվական ձևերում նոր ցուցանիշի ընդգրկման պարագայում իրականացվում է հարցաթերթի դաշտային փորձարկումներ և ցուցանիշի՝ վիճակագրական ռեսպոնդենտների կողմից ընկալման փորձարկում: Իրականացվում են համապատասխան փոփոխություններ դրանց լրացման հրահանգներում ու մեթոդական ցուցումներում:</p>

	<p>3.7 Արտադրության համակարգի վերջնականացում</p>	<p>Իրականացվում են վիճակագրական հարցաթերթերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների տրամադրում ռեսպոնդենտներին՝ գրավոր կամ բանավոր եղանակներով՝ հեռախոսով կամ էլեկտրոնային կապի միջոցներով:</p> <p>Վարչական աղբյուրներից ստացվող տեղեկատվությունում հայտնաբերված ամբողջականության խախտումների, անճշտությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է համապատասխան վարչական մարմին՝ դրանք ճշգրտելու նպատակով:</p> <p>Ամփոփվում և վերջնականացվում են ցուցանիշների վերբերյալ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների ու վիճակագրական արտադրանքը օգտագործողների կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները:</p>
<p>4. Հավաքում</p>	<p>4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում</p>	<p>Ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվության հիման ամբողջականացվում է ՎԲՌ-ի արդիականացված տվյալների շտեմարանը, որը ներառում է հաշվետու տարվա ընթացքում տնտեսական գործունեություն իրականացրած բոլոր Միավորներին:</p> <p>ՎԲՌ-ի հիման վրա Արմստատի ոլորտային վիճակագրական ընտրանքային համակցությունները ձևավորվում են Արմստատի շահագրգիռ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված խնդրի դրվածքին համապատասխան՝ կիրառելով համապատասխան գործիքակազմեր: Նշված տեղեկատվությունը այդ ստորաբաժանումների կողմից կիրառվում է համատարած կամ ընտրանքային դիտարկումների իրականացման նպատակով:</p>

	<p>4.2 Հավաքման կազմակերպում</p>	<p>ՎԲՌ-ի տեղեկատվությունը հավաքվում է առձեռն, փոստի և էլեկտրոնային փոստի միջոցներով: Առձեռն և փոստի միջոցով ՎԲՌ-ի տեղեկատվության հավաքման կազմակերպման նպատակով իրականացվում է դիտարկման ենթակա նախապես հայտնի ռեսպոնդենտների քանակին համապատասխան վիճակագրական հաշվետվությունների ձևերի (անհրաժեշտության դեպքում նաև՝ դրանց լրացման հրահանգների) տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն ու բաշխում համապատասխան ռեսպոնդենտներին: Էլեկտրոնային եղանակով վիճակագրական տեղեկատվություն ներկայացնել ցանկացող ռեսպոնդենտները նախապես այդ մասին հայտնում են Արմատատին և այդուհետ տեղեկատվությունը ներկայացնում էլեկտրոնային եղանակով: Արմատատի կայքում առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հավաքման համար մշակված միջոցներ և ընթացակարգեր: Արմատաի տարածքային մասնագիտական ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցները ունեն համապատասխան գիտելիքներ ու հմտություններ վիճակագրական տեղեկատվության հավաքման գործընթացի կազմակերպման համար:</p>
	<p>4.3 Հավաքման իրականացում</p>	<p>ՎԲՌ-ի ուղղակի աղբյուրից տեղեկատվության հավաքումն իրականացվում է Արմատատի մարզային/Երևան քաղաքի վարչությունների կողմից՝ համաձայն 20.06.2016թ.-ի ՎՊԽ-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման: ՎԲՌ-ի անուղղակի աղբյուրներից տեղեկատվության ստացումն իրականացվում է Արմատատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի կողմից՝ առցանց կամ էլեկտրոնային կրիչների միջոցով:</p>
	<p>4.4 Հավաքման վերջնականացում</p>	<p>Հավաքված տեղեկատվությունը ենթարկվում է թվաբանական ու տրամաբանական ստուգաճշտման: Անհրաժեշտության դեպքում ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգման նպատակով կապ է հաստատվում այդ տեղեկատվությունը ներկայացնող ռեսպոնդենտի հետ:</p>
<p>5. Մշակում</p>		
	<p>5.1 Տվյալների ինտեգրում</p>	<p>Առձեռն հավաքված տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է ինչպես</p>

		<p>մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներմուծելու եղանակով:</p> <p>Ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվությունը ինտեգրվում է մեկ միասնական շտեմարանում՝ բացառելով կրկնությունները:</p>
	<p>5.2 Դասակարգում և կողավորում</p>	<p>Միավորի կողմից իրականացված տնտեսական գործունեությունը կամ այդ միավորի տնտեսական գործունեության իրականացման վայրը դասակարգվում ու ծածկագրվում են ռեսպոնդենտների կողմից ինքնուրույնաբար՝ կիրառելով այդ նպատակներով նախապես մշակված վիճակագրական դասակարգիչները: Նշված դասակարգիչների վերաբերյալ համապատասխան հղումները առկա են ինչպես ՎԲՌ-ի թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներում:</p> <p>ՎԲՌ-ի վերաբերյալ անուղղակի աղբյուրներից ստացվող տեղեկատվության դասակարգումներն ու ծածկագրումներն իրականացվում են այդ տեղեկատվությունը ներկայացնող վարչական ռեգիստրների կողմից՝ վարչական տեղեկատվության հավաքման համակարգերի կիրառմամբ:</p>
	<p>5.3 Վերանայում և հաստատում</p>	<p>Իրականացվում է թերի, աղավաղումներով կամ ամբողջականության խախտումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ ծածկագրված տեղեկատվության համապատասխանեցում գործող վիճակագրական դասակարգիչների պահանջներին: Կիրառելով Արմատատի համար վարչական տեղեկատվության աղբյուր հանդիսացող Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվությունը՝ իրականացվում է Միավորների նույնականացման ծածկագրերի համադրումներ և համապատասխանեցում: Միաժամանակ ուղղակի և անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրումներ են իրականացվում նաև ՎԲՌ-ի այլ ցուցանիշների մասով (հասույթ, աշխատողների միջին տարեկան թվաքանակ, տնտեսական գործունեության տեսակներ, տնտեսական գործունեության</p>

		<p>իրականացման վայր և այլն): Իրականացված համադրումների արդյունքում ճշգրտվում և վերանայվում են ՎԲՌ-ի նախնական տվյալները:</p>
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	<p>Ուղղակի և անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվության մեջ առկա բացթողումների, ցուցանիշների ամբողջականության խախտումների առկայության դեպքում և դրանց ճշտման նպատակով ռեսպոնդենտների հետ կապ հաստատելու անհնարինության պարագայում, այդ տեղեկությունների ճշգրտման կամ ամբողջականության ապահովման նպատակով, կիրառվում են հանրային բաց աղբյուրներում զետեղված արժանահավատ տեղեկությունները կամ այդ Միավորի՝ նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղեկությունները:</p>
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	<p>ՎԲՌ-ի արդիականացված տվյալների շտեմարանի հիման վրա ըստ անհրաժեշտության ձևավորվում են նոր փոփոխականներ: Օրինակ, փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրության վարման նպատակով վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակով որոշվող չափերով կամ ըստ վարչատարածքային բաժանման Միավորների խմբավորումներ:</p>
	5.6 Կշիռների հաշվարկում	<p>Ուղղակի և անուղղակի աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվությունը ապահովում է ՎԲՌ-ի ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:</p>
	5.7 Ազրեգատների հաշվարկում	<p>Մուտքագրված տեղեկատվության հիման վրա ըստ անհրաժեշտության իրականացվում է ամփոփ խմբավորված տվյալների հաշվարկ՝ ըստ Միավորների կազմակերպարավական ձևերի, տնտեսական գործունեության տեսակների, մարզային/երևան քաղաքի պատկանելիության, հասույթի, վարձու աշխատողների միջին տարեկան թվաքանակի և այլնի բաշխվածության:</p>
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	<p>Տեղեկատվության օգտագործողների (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) կողմից ներկայացված հարցումներին բավարարելու նպատակով ՎԲՌ-ի տեղեկատվության հիման վրա, ըստ անհրաժեշտության իրականացվում է բարդ խմբավորումների հաշվարկ՝ միաժամանակ օգտագործելով մի քանի ցուցանիշների կոմբինացիաներ:</p>

6. Վերլուծություն	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	ՎԲՌ-ի ցուցանիշների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության հիման վրա ըստ անհրաժեշտության իրականացվում է խմբավորումների, ինդեքսների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում:
	6.2 Արդյունքների վավերացում	ՎԲՌ-ի ցուցանիշների մշակման ընթացքում պահպանվում են դրանց պատրաստման մեթոդաբանությունը՝ սահմանումները դասակարգումները, մշակման ժամկետները, և այլն:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	ՎԲՌ-ի ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով նախորդ տարիների վերաբերյալ համապատասխան ցուցանիշների դինամիկան: Ոչ օրինաչափ երևույթների հայտնաբերման պարագայում նշված համադրումներն իրականացվում են տվյալների միկրոմակարդակներում, որոնց արդյունքում բացահայտվում, ճշգրտվում և/կամ մեկնաբանվում են համապատասխան ցուցանիշներում առկա փոփոխությունները:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է՝ դրանց պաշտպանությունը անհատական (անվանական) տեղեկությունների տարածումից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» գաղտնիությանը վերագրվող դրույթների:
	6.5 Արդյունքների վերջնականացում	ՎԲՌ-ի տեղեկատվության արժանահավատության ստուգումից և ցուցանիշների ճշգրտումից հետո այն բերվում է ստանդարտ կառուցվածքի, որը դրա հետագա կիրառումը վիճակագրական նպատակներով դարձնում է դյուրին:
7. Տարածում	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Յուրանքանցյուր տարի հունվարի 1-ի դրությամբ իրականացվում է ՎԲՌ-ի տեղեկատվական շտեմարանի տվյալների կառուցվածքի արդիականացում՝ պայմանավորված հավաքման/ստացման ենթակա տվյալների կառուցվածքի փոփոխություններով: ՎԲՌ-ի տվյալների հիման վրա պատրաստվող ամփոփ տեղեկատվության ձևաչափերը արդիականացվում են այդ տեղեկատվության տարածման (հրապարակման, օգտագործողներին, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններին

		տրամադրման) ենթակա ձևաչափերին համապատասխան:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	ՎԲՌ-ի արդիականացված շտեմարանի հիման վրա արտադրվող, տարածման ենթակա վիճակագրական արտադրանքներն են փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրությունը, ինչպես նաև Միավորների վերաբերյալ տարբեր խմբավորումներ՝ տեղեկատվության օգտագործողներին (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների հարցումներին) պատասխանելու նպատակով: ՎԲՌ-ի արդիականացված շտեմարանի հիման վրա պատրաստվող, չտարածվող վիճակագրական տեղեկատվությունը՝ Արմստատի մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվությունն է:
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Տարածման ենթակա վիճակագրական տեղեկատվությունը հրապարակվում է վիճակագրական ծրագրերով սահմանված ժամկետներում, իսկ օգտագործողների (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների) կողմից ներկայացված հարցումների պատասխանները՝ հայցվող կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	ՎԲՌ-ի տարածման ենթակա տեղեկատվությունը ներառվում է վիճակագրական ծրագրերում: Նշված ծրագրերը, ինչպես նաև ՎԲՌ-ի հիմքով պատրաստված վիճակագրական արտադրանքները հրապարակվում են Արմստատի պաշտոնական կայքում:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	ՎԲՌ-ի վիճակագրական արտադրանքը պարունակում է նաև դրա արտադրման մեթոդաբանության վերաբերյալ տեղեկատվություն: Բացի այդ, ըստ անհրաժեշտության, մեթոդաբանական պարզաբանումներ են տրամադրվում ՎԲՌ-ի արտադրանքը օգտագործողներին:
8. Գնահատում		

<p>8.1 Գնահատման միջոցների հավաքում</p>	<p>ՎԲՌ-ի ցուցանիշների որակի, արժանահավատության գնահատման աղբյուրներ են հանդիսանում տարբեր աղբյուրներից ստացվող միևնույն Միավորին վերաբերող տեղեկատվության համադրումները: ՎԲՌ-ի վիճակագրական արտադրանքի արտադրության գործընթացում կիրառվող մեթոդաբանության, ցուցանիշների կազմի ու կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ են ներկայացվում նաև այդ արտադրանքը օգտագործողների կողմից:</p>
<p>8.2 Գնահատման իրականացում</p>	<p>ՎԲՌ-ի տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության համադրման արդյունքում բացահայտվում են համեմատվող ցուցանիշների, կիրառվող դասակարգումների և այլնի հետ կապված անհամապատասխանություններ, որոնք պարզվում և ճշգրտվում են համապատասխան Միավորների հետ: Նշվածի արդյունքում, համապատասխան մեթոդաբանական պարզաբանումներ են տրամադրվում այդ Միավորներին՝ ապագայում նման անհամապատասխանություններից ու անճշտություններից խուսափելու նպատակով:</p>
<p>8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում</p>	<p>ՎԲՌ-ի տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության համադրումների արդյունքում բացահայտվում են նաև անհամապատասխանությունների առաջացման պատճառները: Այդպիսի պատճառներ, բացի ռեսպոնդենտների կողմից տեղեկատվության ոչ արժանահավատ ներկայացումը, կարող են հանդիսանալ նաև վարչական կամ վիճակագրական համակարգերում հնարավոր անհամապատասխանությունները՝ մասնավորապես պայամանավորված ցուցանիշների կազմի, կառուցվածքի, հաշվարկման մեթոդաբանության կիրառվող դասակարգումների և այլնի տարբերություններով: Նման հանգամանքների բացահայտման դեպքում, իրականացվում են անհրաժեշտ աշխատանքներ վիճակագրական համակարգերում և վարչական ռեգիստր վարող մարմինների հետ համագործակցությամբ՝ ապագայում այդպիսի անհամապատասխանությունները բացառելու ուղղությամբ:</p>